

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՅ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 ԷԶ:

Վերջին երկու տասնամյակներին հայոց պատմության համեմատաբար քիչ ուսումնասիրված, բայց և քաղաքական կարևորություն ունեցող թեմաների նկատմամբ հետազոտողների հետաքրքրությունը ոչ միայն մեծացել, այլև ավելի առարկայական է դարձել տարբեր խնդիրների վերաբերյալ կատարված գիտական օգտաշատ ուսումնասիրությունների առումով: Դա, առաջին հերթին, թերևս, վերաբերում է Արևմտյան Հայաստանի տարածքային և էթնոժողովրդագրական խնդիրների վերհանմանն ու լուսաբանմանը: Արևմտյան Հայաստանի առանձին նահանգներին ու գավառներին վերաբերող մենագրություններն ունեն ոչ միայն պատմագիտական, հայրենաճանաչողական, քաղաքական, այլև գործնական-կիրառական նշանակություն: Ինչպես հայտնի է, թուրքական պատմագիտական շրջանակներում գերիշխում է այն տեսակետը, թե Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում ժողովրդագրական քաղաքականության բացասական միտումներ այլահավատների, այդ թվում՝ հայերի նկատմամբ երբևէ չեն եղել: Ուստի այսօր, առավել, քան երբևէ, հայ պատմագիտությունը պարտավորություն ունի սեփական ժողովրդի պատմությունը պաշտպանելու բոլոր տեսակի ոտնձգություններից ու կեղծարարություններից:

Սույն մենագրությունն այդպիսի հաջողված ձեռնարկումներից է, որի թեման կարևոր և արդիական է Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրության վարած ժողովրդագրական քաղաքականության եռությունն ու ակունքները ցույց տալու և Արևելյան Հայաստանում համանման ոչ նպաստավոր գործընթացների հաջորդականությունը տեսնելու առումով: Աշխատանքում ցույց է տրվել, որ ոչ հայանպաստ ժողովրդագրական քաղաքականության առաջին դրսևորումներն ակնհայտ էին դեռևս 16-րդ դարում: Հեղինակը սկզբնաղբյուրների (ձեռագրերի հիշատակարաններ, վիմագիր արձանագրություններ), հրատարակված արխիվային փաստաթղթերի, գիտական գրականության ընձեռած փաստերի և գիտական պարբերականներում եղած առանձին հաղորդումների քննական վերլուծության հենքի վրա կատարել է արժեքավոր համալիր ուսումնասիրություն և համոզիչ փաստերով, փաստարկումներով ու մեկնաբանություններով ներկայացրել 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին Հայաստանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացները և դրանց հետևանքները:

Ընդ որում՝ նման արդիական թեմայով ուսումնասիրություն կատարելու համար Մ. Մալխասյանի առջև ծառայած գլխավոր խոչընդոտը փաստավիճակագրական բնույթի տվյալների խիստ սակավությունն է: Սակայն դա ամենևին էլ չի հուսաթափել նրան՝ զբաղվելու այնպիսի թեմայի ուսումնասիրությամբ, որի գիտական նշանակությունն ու քաղաքական արդիականությունը փոխկապակցված են: Մ. Մալխասյանը կատարել է արժեքավոր ուսումնասիրություն, որին բնորոշ են թեմայի տրամաբանական զարգացումը, գիտական, հետազոտական ակնառու որակները, եզրահանգումների գոհացուցիչ հիմնավորվածությունը, գրեթե անթերի գրագետ շարադրանքը և լեզվաճանաչական պատշաճ մակարդակը:

Մենագրությունն ունի կուռ կառուցվածք և տրամաբանական բաժանում: Այն բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, ռուսերեն և անգլերեն ընդարձակ ամփոփումներից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, կարևորությունը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական և տարածքային ընդգրկումները, կառուցվածքն ու բովանդակությունը, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, հետազոտության մեթոդաբանությունը, գիտա-

կան նորույթը, արքյուրագիտական հիմքը և հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, մենագրության ստեղծման անհրաժեշտությունը և գործնական-կիրառական նշանակությունը:

Առաջին գլխում «Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում», որը բաժանված է երեք ենթագլուխների, ներկայացված և լուսաբանված են նշված ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների միտումներն ու առանձնահատկությունները, էթնիկական տեղաշարժերի պատճառներն ու հետևանքները, բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը: Հանգամանորեն վերլուծված են հատկապես Հայաստանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների վրա խիստ բացասական ազդեցություն թողած թուրք-պարսկական պատերազմները, որոնց ընթացքում տեղի ունեցան հայ բնակչության բռնագաղթեր Վանա լճի ավազանից, Արարատյան կուսակալությունից և Հայաստանի այլ շրջաններից, ինչպես նաև զգալիորեն աճեց մահացությունների թիվը: Չուգահեռաբար քննված է նաև բնական միջավայրի ազդեցությունը ուշմիջնադարյան Հայաստանի ժողովրդագրական գործընթացների միտումների ձևավորման գործում: Մի քայլ Մալխասյանը ձեռագրերի հիշատակարանների ընձեռած տվյալների հիման վրա հաշվարկել է ընտանիքի միջին մեծության գործակիցը, իսկ զանգվածային մահացության դեպքերի վերաբերյալ հավաքած վիճակագրական տվյալների օգնությամբ հաստատել ժողովրդագրական աղետների մասին մատենագրական տեղեկությունների իսկությունը: Այս գլխում քննվել են Հայաստանի հարավային ու կենտրոնական շրջաններում քրդական տարրի դիրքերի ամրապնդման ուղղությամբ Օսմանյան կայսրության վարած պետական քաղաքականության, օտար էթնիկ ներթափանցումների միտումներին առնչվող, ինչպես նաև հայ բնակչության թվաքանակի աճի վրա բացասական ազդեցություն թողած այլ երևույթներ (դեշիրմե, հարկային խտրական քաղաքականություն, բռնի կրոնափոխություն և այլն), միաժամանակ փաստարկվել, որ օտար էթնիկական տարրը մշտաբանակ չէր Հայաստանի կենտրոնական շրջաններում, իսկ առանձին վարչամիավորների օրինակով ցույց է տրվել, որ բնակչության խտությունը բավականին մեծ էր, և հայ բնակչությունը շարունակում էր կազմել բնակչության ճնշող մեծամասնությունը:

Երկրորդ գլխում «Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 17-րդ դարի առաջին կեսին», որը բաղկացած է հինգ ենթագլուխներից, ներկայացված և լուսաբանված են քննվող ժամանակաշրջանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների միտումներն ու առանձնահատկությունները, հատկապես շեշտադրում է կատարված պատերազմական գործողությունների, սովի, համաճարակների, բնական աղետների հետևանքների վրա: Այս համատեքստում քննական շարադրմամբ լուսաբանվել են շահ Աբաս Ա-ի կազմակերպած բռնագաղթի պատճառները, ընթացքը, ժողովրդագրական հետևանքները, ջալալիական շարժման, թուրք-պարսկական պատերազմական գործողությունների ժողովրդագրական հետևանքները, հեղինակի կողմից գիտական շրջանառության մեջ դրվելու առաջարկված «Մեծ սով» եզրույթը, մեծ թափ առած արտագաղթի ալիքի հիմնական ուղղությունները, Ամիրգունա խանի վարած ժողովրդագրական քաղաքականությունը, բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը, հայ բնակչության էթնոկրոնական այլակերպումները և հարակից այլ երևույթներ: Հարկ ենք համարում շեշտել, որ այս գլխում Մ. Մալխասյանը, սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների քննությամբ, նորովի է ներկայացրել բռնագաղթի ընդգրկած տարածքը և բռնագաղթի ենթարկված բնակչության թիվը: Նա առաջարկում է բռնագաղթի ենթարկվածների թիվը համարել շուրջ 605 հազար, որի մեկ երրորդը զոհ է գնացել գաղթի ճանապարհին: Այնուհետև հեղինակն առաջարկում է գիտական շրջանառության մեջ դնել «Մեծ սով» եզրույթը ջալալիական շարժման և թուրք-պարսկական պատերազմական գործողությունների հետևանքով 1606-1609 թթ. բռնկված սովի համար, քանի որ մարդկային կորուստներով, տարածքային ընդգրկմամբ և ժողովրդագրական աղետալի հետևանքներով այն աննախադեպ երևույթ էր:

Եզրակացության մեջ հանրագումարի են բերվել մենագրության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Մենագրության ամբողջ շարադրանքում Միքայել Մալխասյանն ակնառու կերպով դրսևորել է բարեխիղճ հետազոտող-գիտնականին հարիր քննախույզ, օբյեկտիվ և նորովի մոտեցում ինչպես առանձին հարցերի, այնպես էլ հիմնախնդրի նկատմամբ ամբողջությամբ վերցրած: Մենագրությունն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Այն արժեքավոր ներդրում է հայոց պատմության՝ քննարկվող ժամանակաշրջանի ամբողջական ուսումնասիրության գործում:

Բարձր գնահատելով մենագրության գիտական արժեքը՝ հարկ ենք համարում նշել, որ գրախոսվող աշխատանքի թեման արդիական է, ունի գիտաճանաչողական և քաղաքական կարևոր նշանակություն: Այն լուրջ ներդրում է Հայաստանի ժողովրդագրական գործընթացների պատմությունն ամբողջացնելու ուղղությամբ:

Ամփոփելով նշենք, որ մենագրությունը գրված է պատմականության և գիտականության դիրքերից:

Արման Մալոյան – պ.գ.թ.